

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 3-ին, չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

***

Հոկտեմբերի 12-ին, ուրբաթ.— Այսօր Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ հոգևորականության հավաքույթ, որի ժամանակ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը ներկաներին պատմեց Մայր տաճարի երգչախմբի Գերմանիա կատարած առաքելության մասին: Ապա Վեհափառ Հայրապետը խոսեց հոգևոր սպասավորների նոր անելիքների մասին:

***

Հոկտեմբերի 14-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը:

***

Հոկտեմբերի 17-ին, չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

***

Հոկտեմբերի 21-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Աբրահամ վրդ. Մկրտչյանը: «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Հոկտեմբերի 24-ին, չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

***

Հոկտեմբերի 28-ին, կիրակի.— ԳՅՈՒՏ ԽԱՉ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մամիկոն աբդ. Քիլեճյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***

Հոկտեմբերի 31-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

***

Նոյեմբերի 4-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սերովբե վրդ. Իսահանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Նոյեմբերի 7-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

***

Նոյեմբերի 11-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Նոյեմբերի 14-ին, չորեքշաբթի.— Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

***

Նոյեմբերի 16-ին, ուրբաթ.—Այսօր Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ հոգևորականության հավաքույթ, որի ժամանակ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը ներկաներին պատմեց Երուսաղեմ կատարած իր այցելության մասին: Ապա Վեհափառ Հայրապետը խոսեց Հայաստանի ներկա դժվարին կացությունից և քահանա հայրերի ու միաբանության հետագա անելիքների մասին:

***

Նոյեմբերի 18-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Շնորհք աբդ. Բաղդասարյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Նոյեմբերի 21-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

***

Նոյեմբերի 25-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Սեպուհ ծ. վրդ. Սար-

գրչյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

***

Նոյեմբերի 28-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

***

Դեկտեմբերի 1-ին, շաբաթ.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնին նվիրված, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը:

***

Դեկտեմբերի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը: «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց Տ. Աբել աբդ. Օղլուգյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Դեկտեմբերի 7-ին, ուրբաթ.—Այսօր Մայր տաճարում, ահավոր երկրաշարժի երկրորդ տարելիցի առթիվ, կատարվեց հանդիսավոր հոգեհանգիստ՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

***

Դեկտեմբերի 9-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ, երկրաշարժի երկրորդ տարելիցի կապակցությամբ, բովանդակալից քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Դեկտեմբերի 12-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

***

Դեկտեմբերի 16-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Սեպուհ ծ. վրդ. Սարգսյանը:

***

Դեկտեմբերի 19-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

***

Դեկտեմբերի 23-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ավստրալիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Աղան եպս. Պալիոզյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Դեկտեմբերի 25-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր տաճարում, Ս. Ստեփանոսի խորանի վրա, ս. պատարագ մատուցվեց՝ նվիրված Ստեփանոս Նախավկային: Պատարագիչն էր Տ. Մխիթար աբդ. Գուտուզյանը, «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Շահե արքեպս. Աճեմյանը:

Ս. պատարագից հետո, ավանդության համաձայն, Մայր տաճարի միաբան սար-

կավագները այցելեցին Վեհարան՝ ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

***

Դեկտեմբերի 26-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

***

Դեկտեմբերի 30-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սեպուհ վրդ. Զուլչյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: